15308

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 11 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0177-22

Ձեռնարկողը՝ ***«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ***
ք. Երևան, Թումանյան փողոց 32/1

Գործունեությունը՝ ***Երևանի Մ. Մխոյանի անվան թիվ 68 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0177-22

<30> 11 2022թ.

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևանի Մ. Մխոյանի անվան թիվ 68 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Էրեբունի վարչական շրջան, Նոր-Արեշ 8

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է կառուցել Երևանի Մ. Մխոյանի անվան թիվ 68 հիմնական դպրոցը: Դպրոցի կառուցումն իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակում՝ Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) և ՀՀ կառավարության աջակցությամբ, իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը (ՀՏԶՀ): Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է անհատական, հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2021 թվականի օգոստոսի 25-ի N 01/18-071/3076-Ա նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.հ. 10072013-01-0217 (0.7381 հա) և 13112019-01-0242 (0.2 հա) վկայականներով ամրագրված հողատարածքների սահմաններում: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի և Երևանի քաղաքապետի 2021 թվականի օգոստոսի 25-ի թ.հ. 3076-Ա որոշման համաձայն՝ հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը անհատույց օգտագործում, սեփականություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Մ. Մխոյանի անվան թիվ 68 հիմնական դպրոցը գտնվում է Երևանի Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշ 8-րդ փողոց 56 հասցեում: Դպրոցը բաղկացած է երեք մասնաշենքերից, որոնք միմյանց կապված են մեկ հարկանի տաք անցումներով: Գլխավոր մասնաշենքը չորս հարկանի է, իսկ մյուս մասնաշենքերը

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

եռահարկ: Դպրոցի արևելյան կողմից կազմակերպված են դպրոցի մուտքերը, որոնք հարում են Նոր Արեշի 8-րդ փողոցին, հյուսիսային կողմում նոր իրականացվող կիսակառույց շինություն է, իսկ հարավային և արևմտյան կողմից անհատական բնակելի տներ են: Դպրոցի ցանկապատի հեռավորությունը հարակից Նոր Արեշ 6-րդ և 8-րդ փողոցներից կազմում է 1 (մեկ) մ, անհատական բնակելի տներից՝ 15 մ: Տարածքը գտնվում է խառը կառուցապատման գոտում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները: Անմիջապես դպրոցի տարածքում կան կանաչ գոտիներ: Հողատարածքի սահմանագծով և դպրոցի շենքին մոտ սիզամարգերում առկա են 18 հատ պտղատու ծառ, որոնցից 4 ծառ գտնվում են կիսաչոր վիճակում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը հանդիսանում է Արարատյան կուտակային դաշտի հյուսիս-հյուսիսարևելյան եզրամասը: Ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում են՝ 956-962 մետրի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերը գտնվում են 10 մետրից խորը, բայց հորատման ընթացքում թիվ 3 հորատանցքում հանդիպել է գրունտային ջուր՝ 6.0 մետրի վրա և հաստատվել 5.35 մետրի վրա: Մյուս երեք հորատանցքերում գրունտային ջուր չի հանդիպել:

Ներկայացվող տարածքում տարածված են կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը համատարած բնույթ չեն կրում: Բուսաշերտի հզորությունը տատանվում է 10-20 սմ:

Թիվ 68 դպրոցի տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության և մշակութային հուշարձանների կամ կենսաբազմազանության վտանգված տեսակների հետ:

Հողամասում առկա են դպրոցի հին շենք (5801,85 մ^2), հին կաթսայատուն (36 մ^2), անհատույց անժամկետ օգտագործման շինություն (37,12 մ^2), զինկոմիսարիատ (766,17 մ^2), ավտոտնակ (41,18 մ^2), պարիսպ (1,55 մ^2/4, 42 խմ և 41,85 մ^2 /101,49 խմ): Առկա բոլոր շինությունները և գոյություն ունեցող տաքանցումը ենթակա են քանդման:

Դպրոցի քանդման աշխատանքների համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2019 թվականի N 87-Ա «Անհատույց սեփականության իրավունքով գույքը հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքները կազմակերպելու մասին» որոշումը[1]: Սույն որոշման կետ 2-ով սահմանված կարգով դպրոցի շենք-շինությունների քանդման արդյունքում ձևավորվելիք շինանյութը սեփականության իրավունքով անհատույց հանձնվելու է դպրոցի կառուցման համար ընտրված շինարարական կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշ 8-րդ փողոց 56 հասցեում կառուցել սեյսմիկ պահանջներին բավարարող դպրոցի շենք, որը կապահովի ուսումնական ծրագրերի արդյունավետ իրականացումը, ինչպես նաև անձնակազմի և աշակերտների համար հարմարավետ պայմաններ:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Աշակերտների քանակը - մոտ 430 աշակերտ,
- Հողատարածքի ընդհանուր մակերեսը - 9381,0 մ^2,
- Կառուցապատման մակերեսը - 3745,0 մ^2,
- Կաթսայատուն - 24,0 մ^2,
- Ոչ ջրաթափանց մակերեսներ /սալվածք, աստիճաններ և այլն/ - 1859,6 մ^2,
- Կանաչապատ տարածք, ջրաթափանց մակերեսներ - 3752.4 մ^2 /40 %/:

Դպրոցի տարածքում նախատեսված է նաև սպորտային և մարզական գոտիներ:

[1] http://www.irtek.am/views/act.aspx?aid=98264

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ դպրոցը բաղկացած է ութ կառույցներից (A, B, C, D, E, F, G, H մասնաշենքերից), որոնք միմյանցից բաժանված են սեյսմիկ կարաններով: B և G մասնաշենքերն երկհարկ են, իսկ A, C, D, E, F, H մասնաշենքերը՝ միահարկ:

Մասնաշենքերից յուրաքանչյուրը հատակագծում ունի հետևյալ առանցքային չափերը.

- A մասնաշենք – 31,4 x 13,8 մ,
- B մասնաշենք – 31,4 x 37,3 մ,
- C մասնաշենք – 19,6 x 16,1 մ,
- D մասնաշենք – 11,6 x 8,9 մ,
- E մասնաշենք – 16,1 x 14,7 մ,
- F մասնաշենք – 24,5 x 16,1 մ,
- G մասնաշենք – 40,6 x 14,7 մ,
- H մասնաշենք – 5,8 x 16,1 մ:

Հարկի բարձրությունը C և F մասնաշենքերում 6.1 մ է, A մասնաշենքում՝ 3.9 մ, D, E և H մասնաշենքերում՝ 3.6 մ, B և G մասնաշենքերում՝ 3.3 մ:

Դպրոցի կառույցների կրող համակարգերը միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաներով է: Կրող համակարգը կոռոզիայից պաշտպանելու համար մետաղե կոնստրուկցիաները պարբերաբար՝ համաձայն գործող շինարարական նորմերի, կպատվեն հակակոռոզիոն նյութերով:

Ճարտարապետական 0.00 նիշը համապատասխանում է 968.60 մ բացարձակ նիշին:

Երևանի Մ. Մխոյանի անվան թիվ 68 հիմնական դպրոցը ներկայում ապահովված է խմելու ջրով, կոյուղու, էլեկտրամատակարարման և գազամատակարարման համակարգերով:

Դպրոցի ջեռուցումը իրականացվելու է նոր կաթսայատան միջոցով, որտեղ տեղադրվելու են ջրաջեռուցիչ կաթսաներ: Կաթսաները համալրված են լինելու ժամանակակից գազային այրիչներով և ապահովելու են ազոտի օքսիդների առաջացման նվազագույն մակարդակ, պլանային ռեժիմում՝ ածխածնի օքսիդի գործնականում բացակայություն: Ծխագազերի արտանետումն իրականացվելու է ծխնելույզի միջոցով, որի բարձրությունը պետք լինի առնվազն 1.2 մ ավելի բարձր մոտակա շինության բարձրությունից:

Ջերմասպառումը կրճատելու և համապատասխանաբար ջերմային էներգիայի արտադրության ժամանակ առաջացող արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսվում է տանիքների վրա տեղադրել արևային մարտկոցներ:

Նոր կառուցվող մասնաշենքի համար նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու ջրահեռացում գոյություն ունեցող ցանցերից, հակահրդեհային սնուցող ցանց, էլեկտրամատակարարում: Անհրաժեշտ պահանջարկն ապահովվելու է գոյություն ունեցող ցանցերից՝ լիազոր մարմինների կողմից տրվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր է կատարում:

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Շինարարական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված է փոշեառաջացման օջախների ջրմամբ, որը ներկայցված բանաձևով կազմում է 624.0 մ³/շին.ժամ: Շինարարության ժամանակահատվածի համար կենցաղային և խմելու ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (20 մարդ), ինչը կազմում է 100 լ/օր:

Շինարարության նախապատրաստման փուլում տեղանքում կհանվի 450 մ³ բերրի հող: Հողի կտրումը, պահեստավորումը, պահպանումը և հետագա օգտագործումը կիրականացվի ՀՀ կառավարության 02"10.2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու N 1404-Ն պահանջներին համապատասխան: Շինարարության ընթացքում հանվող գրունտը ամբողջությամբ օգտագործվելու է հետլիցքի, տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով:

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ /մնացորդային հողային զանգվածներ, քանդման արդյունքում առաջացող շինաղբ, ասֆալտբետոնյա ծածկույթ և այլն/: Շինարարական աղբը համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանի համապատասխանում է «Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներ» տեսակին: Քանդման արդյունքում առաջացող շինարարական թափոնները (2100 մ³) և կենցաղային աղբը (50-60 մ³) տեղափոխվելու են Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացուցային ժամանակացույցի և կազմում է 24 ամիս, որից 2 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող մասնաշենքերի ապամոնտաժման/քանդման աշխատանքների համար: Նախատեսվող շինարարական և տրանսպորտային միջոցներից շահագործվելու են ավտոկռունկ, բետոնատար մեքենա, էքսկավատոր, բեռնատար մեքենա և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ և այլն: Շինանյութերը ձեռք են բերվելու միայն լիցենզավորված մատակարարներից: Բետոնի խառնուրդ շին. հրապարակ է տեղափոխվելու պատրաստի վիճակում, ինչը ձեռք է բերվելու համապատասխան մատակարարներից:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է տարածքի 40 % (տոկոս)՝ 3752,4 մ² կանաչապատել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման դրույթներով: Համաձայն նախնական գնահատման հայտի՝ առկա ծառերը շինարարության ժամանակ հիմնականում չեն վնասվելու, բացառությամբ 4 հատ կիսաչոր ծառի, որոնք հատվելու են, 6 հատ երիտասարդ ծառ տեղափոխվելուև վերատնկվելու է: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է սոսի, թղկի և թփատեսակներ, որոնք հարմար են Երևան քաղաքի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Նախատեսվում է ընդհանուր առմամբ տնկել 60 ծառ, որոնցից՝ 30 պտղատու, 30-ը՝ սոսի և թղկի:

Տարածքում առկա է ոռոգման համակարգ, որը շինարարության ընթացքում կվերանորոգվի:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների՝ նախատեսվել են հաշմանդամների և ԲՍԽ-երի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ, կլինեն սահմանափակ և կարճատև: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ քանդման աշխատանքների, հիմքերի փորման, նոր կառուցվող մասնաշենքերի շինարարության, հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև հնարավոր է աղմուկի մակարդակի ավելացում և դիզելային վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով ԲԿ պլանով նախատեսված բնապահպանական միջոցառումներն են՝

- օդային ավազան փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի պարբերաբար ջրցանում;
- շին. հրապարակում բացառել թափոնների կուտակումները, թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն;
- հողաբուսաշերտի պահեստավորում 2 մ չգերազանցող բարձրությամբ կույտերի տեսքով և պաստառներով ծածկված վիճակում;
- շին. աշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել հողային մաերեսների վրա անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են շինթափոնների տեղադրում, կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացում և այլ գործողություններ;
- անհրաժեշտ է շին. հրապարակում կառուցել կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացման համար նախատեսված ժամանակավոր, պաշտպանիչ թաղանթով մեկուսացած հոր/պարզարան (≥5 խ.մ);
- հաշվի առնելով տարածքին կից բնակելի տների առակայությունը, հիմնական աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացնվելու են հնարավորինս օրվա ցերեկային ժամերին՝ 14:00-18:00՝ ՀՀ թույլատրելի նորմերի սահմաններում:
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչներ տեղադրել;
- խուսափել տարածքում այն ծառերի և թփերի հատումից, որոնք ազդեցության չեն ենթարկվում՝ համաձայն նախագծի, անհրաժեշտ է բացառել տարածքում առկա հատված բուսականության այրումը;
- պարզ տեսանելի ցուցանակների, զգուշացնող նշանների կիրառում, պատնեշների և շրջանցող ուղիների նախատեսում շին. հրապարակում՝ հանրությանը վտանգների մասին նախազգուշացնելու համար;
- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի հսկողություն գործիքների չափագրում՝ անհրաժեշտության դեպքում;
- կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքներ՝ համաձայն բարեկարգման նախագծի;
- ձեռնարկել առկա, տնկված ծառերի, թփերի, խոտածածկի պահպանումը և մոնիթորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից: Մեղմացնող միջոցառումների արժեքը գնահատվում է ծրագրի ընդհանուր արժեքի մոտավորապես 2%:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող ուսումնական հաստատության տարածքում: Այն կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Ազդեցություններն իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև՝ պայմանավորված շինարարական աշխատանքներով: Ազդեցությունները կանխվելու կամ նվազեցվելու են նախնական գնահատման հայտով բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում: Սեյսմիկ պահանջները բավարարող դպրոցի նորակառույց շենքը կապահովի ուսումնական ծրագրերի արդյունավետ իրականացում, ինչպես նաև աշակերտների և անձնակազմի համար հարմարավետ պայմաններ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, Էրեբունի վարչական շրջանը, ՇՄ նախարարության ստորաբաժանումները, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային քննարկում, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Ապահովել հայտում նախատեսված գործունեության՝ շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և հաստատված կանաչապատման նախագծի:

- Անհրաժեշտ է ապահովել նախնական գնահատման հայտով ամրագրված (40 %) կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
- Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
- Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշամն 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևանի Մ. Մխոյանի անվան թիվ 68 հիմնական դպրոցի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան